



Լևոն Շանթ

Լեռան աղջիկը

Նուագ երկրորդ

ԼԵՌՆԱԴԱՇՏԸ

Պայծառ արեւ էր, երբ աչքըս բացի,

Ընկերներըս խոր կննջէին դեռ:

Վրանին առջեւ երկու արձակ ձի

Յօղաթուրմ խոտը ախորժով կուտէր:

Հսկայ ծերուկ մը երկու քայլ անդին

Նստեր կխորհէր ձեռքը ծնոտին:

Դուրսէն բիր ձայներ, ճովողին, դայլայլ

Եւ սուր բզզիւն մը անվերջ, անյայլալ

Համանուագ մը կդաշնակէին:

Ես չդիմացայ, ցա տկեցի տեղէս.

Աղբիւրն հարցուցի ծերուկ տանտերէս.

Ան քանի մը բառ պոռաց անմէկին

Ու աղջիկ մը նետը վազեց կարմրած,

«Գնա՛ ետեւէն»՝ ծերը մոմրոաց:

Ի՛նչ սիրուն օր էր, ի՛նչ կապոյտ եթեր.

Շուրջըս շող ու ցօղ, թարմութիւն ու գով.

Հոն բնութիւնը կարծես լրուացուէր՝

Չորցուիլ կուգէր գեփիտի շնչով:

Ես կքալէի արբշիռ ու արագ՝

Լեռան ջինջ օդը ծծելով անհագ.

Աղջիկը թեթեւ առջեւէս կերթա

Մանրիկ, ոստոստուն քայլուածքով կայտառ:

Ա՛, իր նուրբ ճկուն մէջքը կանացի.

Եւ թիկունքէն վար սեւ գիսակը ճոխ՝

Օձի պէս սողուն ու աչքի կառչող:

Չո՛ւր հետը խօսիլ հեղ մը ջանացի.

Գլուխը հակեց շարժումով մը վեւ,

Ցնցում մը ըրաւ, թրոաւ առջեւէս:

Եւ ես խելահեղ ինկայ ետեւէն,

Կարծես գրգռուած իր վագքէն համառ.

ՀԱսայ ու ամուր բռնեցի թելէն,

Առանց գիտնալու, թէ ինչու համար:

Անոր արեւոտ այտերը սիրուն

Հազիւ էր պագեր տասնըհինգ գարուն.

Եւ ի՛նչ թարմ մարմին, եւ ի՛նչ հրապոյր,

Ինչպէ՛ս նրբակազմ, ինչպէ՛ս կենսաբոյր:

Ես պահ մը անթարթ նայեցայ իրեն,

Մինչ ինքն ամշկոտ հայեացքը անուժ

Հառեց աչքերուս վարանքով անուշ,

«Անունըդ», ըսի. ժպտեցաւ նորեն.

Եւ հանկարծ խլեց թելը ձեռքերես

Ու փախաւ լեռան երէի մը պէս:

Անհետ եղաւ ան ժայռերու ետեւ,

Իսկ ես միայնակ մնացի շուար.

Կրծքիս տակ բան մը կճմլէր թեթեւ,

Անկանոն շունչըս արագ կհեւար.

Ու սիրտըս ամուր մուրճի մը նման,

Չարկ կուտար պինդկալինդ. խենթեցեր էր ան:

Անշուշտ անսովոր իմ շտապ վագրէս

Այսպէս շնչասպառ, հուզուած էի ես:

Մտքիս մէկ խորշէն կըսէին սակայն,

մոր ոյդ բնական պատճառէն տարբեր

ուրիշ մոր բան մը հոգիս էր թափեր,

Նոր բան մը ճմլող, թարմ ու դուրեկան□

Մինչեւ որ թուցան գարկերը սրտիս

ու ես հոգեգմայլ նայցեայ չորս դիս:

***Նոր էր ամէն բան հոն ինծի համար.

Այդ չքնաղ վայրի բնութիւնն ազդու,

Այդ շուրջանակի լեռներն անհամար,

Որոնք թելթելի հենած իրարու

Սկսիլ կուգեն շուրջպար մը հսկայ,

որ համրատատան կերթայ ու կուգայ.

մեր նեղ, ցից սարը, որ դաշտին դիմաց

Բեմ մը կկարծես կանանչով գորգած:

Դիցազնի բեմ մը, որուն բարձունքէն

Ամէն առաւօտ վարդ արշալոյսին

Բիւրաւոր գուարթ ձայներ միասին

Բնութեան գեղը կճառեն կերգեն:

Ի՛նչ հիացումով եւ յոյզով եռուն

Ներկայ եմ եղեր այդ ներբողներուն:

Լեռնային վայրի բնութեան նման,

Նոր էր ու բուռն վարած կեանքերնիս.

Անցեալի՛ յուշեր, եկէ՛ք օգնութեան,

Երգե՛նք միասին ինչ քաղցր էր սրտիս:

Երբ առաւօտը գաղտնիկ ժպտալէն՝

Լեռան ու երկնի համբոյրի վայրէն՝

Ցոյց տար դալկահար, քնատ աստղերուն

Քունէն կարմրած այտերն իր սիրուն,

Երբ Արագածի չորսնճիւղ գագաթին

Թուխնաթուխ ամպերը խորունկ հորանջով

Ճերմակ մահիճնուն ելլէին նագով.

Եւ երբ արթննար օդը հանդարտին

Թռչուններու սուր առաջին երգէն,

Մենք ալ կելլէինք հովուի վրանէն:

Մեր ուրախ, անգուսպ բարձր երգերուն

Աղբիւրն իր հեզիկ ձայնը կխառնէր,

մինչ իր սառնորակ հոսանքը ծիծղուն

Քունի համբոյրը այտէս վար կառնէր:

Հեռո՛ւն լեռներէն հտալիտն արձագանք

Ճշտիւ կկրկնէր իւրաքանչիւր վանկ:

Մենք, արբած լեռան մաքուր, գաղջ օդէն,

Հողի ու ծաղկի գրըռիչ հոտէն,

Շարջելու տենչ մը կզգայինք հանկարծ:

Դէ՛, շիտակ այն սեպ, ժայռոտ բլրէն վեր.

Ետեմնուս հող, քար վար կզլտորվէր

Խուլ թնդիւնով մը, թափով մը անդարձ,

Մինչ խումբը հեւքով շեշտ առաջ կերթա

Գագա՛թը միայն առնելու դադար:

Ապա կերթայինք ու ջոկին մէջէն

Շուտ կթամբէինք մեր նախընտրած ձին.

Եւ դալարագեղ լեռան թեք լանջդն

Ձին ճամփայ կիյնար միշտ հլու սանձին:

Ա՛խ, երբ ան կատղած, բերնին հորդ փրփուր,

Ճոխ բաշը հովին, աչքերուն մէջ հուր,

Պինչերուն շոգի, շեշտ կալանար

Ոտքերն ու կորածքը գետնին հավասար,

Կարթըննար մէջըս վայրի բնագոյներ.

Կուզէի բան մը, որ փշրեն ջարդեն,

Կուզէի կովին սուլող հովին դէմ,

Որ ականջիս տակ ծաղրըս կհանէր:

Այն պահուն ձիւս, չէ՛, տարբեր չէի,

Ե՛ս ալ, իրեն պէս, կվրնջէի:

Կամ իրիկունը, երբ թոյլ ցուքերով

Արեւը երկրիս հրաժեշտ կուտար,

Եւ երբ լեռները իրենց ստուերով

Պինդ կփաթթէին հովիտը դալար.

Երբ հովիւները փշելով շուին՝

Դէպի վրանը ետ կքշէին

Մայրո՛ղ, բառաչող հոտերն ու տավար,

Մենք՝ թնրութիւննիս վանելու համար՝

Դէպի վտակը կերթայինք շտապ.

Լեռան ցատկոտող ջուրերը հստակ

Ա՛լ կփրփրէր մեր զարկերուն տակ.

Մինչ մենք դեռ երկար, թէն ուժաթափ,

Իր հոսանքին դէմ կուտայինք պայքար,

Որ կարկաշելով վրանիս կուգար:

Վտակին մօտիկ ժայռ մը կայ ցցուած,

որուն դէմ հովը իգուր կսպառնայ.

Լողանալէ վերջ՝ զով ու թարմացած

Հո՛ղ կժողութինք՝ այդ ժայռին վրայ:

Ճիշտ մեր ձախ կողմէն մասիսն ամեհի

Լեռան մը ուսէն շեշտ մեզ կնայի.

Աջէն Արագած՝ հակած Արային՝

Ո՛վ գիտէ, ինչեր կպատմէ հինսհին:

Այրարատ դաշտը կփռուի մեր դէմ,

Որ պինդ պարտութեամբ իր գորշ ծածկոցով

Քուն մտնել կուգէ. ի՛նչ մշուշի ծով:

Ետիս ալ ձորի մութն է ձառադէմ,

ուր Ազատ խոր, խուլ, անձաներուն մէջ

Կկռուի անդուլ իր կռիւն անվերջ:

Եւ մենք անձնատուր մեզ շրջապատող

Դարերու վկայ այդ արձաններուն,

Կմնանք անշարժ, լուռ ու սրտադող՝

Մութին մէջ գամած աչքերնիս հեռո՛ւն:

Հին, հոգնած դարեր, ծեր ուխտերու պէս,

Կուգան ու դանդաղ կանցնին առջեւէս:

Բայց, տեսար, վէճ մը մեր մէջ կփրթի՝

Անմիտ յորդում մը տենչայոյց սրտի.

Գալիք օրերու քողը կպատռի

Մեր անփորձ մտքի հանդուգըն ճիգէն.

Ի՛նչ պատկեր, ի՛նչ կեանք կժպտի տակէն,

Եւ ա՛լ՝ վարդերանգ յոյսերու գերի՝

Պինդկալինդ կհավտանք, սո՛ւր հպարտութիւն,

Թէ պիտի չացնին մեր կեանքն ապարդիւն: